## *3-4 դասարան*

## *3 միավոր գնահատվող առաջադրանքներ*

1) Ի՞նչ է սովորաբար ընկնում երկնքից հեքիաթի վերջում:

Ա) երեք խնձոր
Բ) երեք արջեր
Գ) երեք խոզուկներ
Դ) երեք պարկ ոսկի

2) Ո՞ր բառը կընտրի տատիկը, որ գովի սիրելի թոռնիկի խելքը:

Ա) տոպրակ
Բ) պուտուկ
Գ) ծով
Դ) քամի

3) Տարբերակներից ո՞րը սովորաբար չի լինում խոհանոցում:

Ա) ջարդիչ
Բ) հարիչ
Գ) կտրիճ
Դ) ջեռուցիչ

4) Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

*Բուրգ, գրամ, մարի, իրան,*

Ա) նկար
Բ) նամակ
Գ) նույն
Դ) նշան

Վերարտադրումը միայն "Հոնթեսոս ԼՍԿ"-ի թույլտվությամբ

5) Տարբերակներից ո՞րն է «ավելորդ» բառաշարքում:

*Մլավել, խռովել, գրավել, առավել, խորովել*

Ա) մլավել
Բ) խռովել
Գ) առավել
Դ)խորովել

6) Ո՞ր գույնն է հնարամտորեն թաքնվել նկարների շարքում:

Ա) կարմիր
Բ) կապույտ
Գ) սպիտակ
Դ) դեղին

7) Տարբերակներից որո՞ւմ հարցական բառ չես գտնի:

Ա) նորեկ
Բ) գումար
Գ) ներքան
Դ) հյութ

Վերահրապարակումը միայն "Քոնթենտ Լաբ"-ի թույլտվությամբ

8) Յուրաքանչյուր քայլում բառի մեջ փոխելով մեկ տառ՝կով -ից ստացել են յուղ: Ո՞ր բառը պետք է գրել մեղվիկի փոխարեն:

*Կով – կող - քող -* *- յուղ*

Ա) գող
Բ) փող
Գ) քուղ
Դ) բուկ

9) Այն ի՞նչն է, ի՞նչը:

*Առանց մարդու երկիր է,*
*Քաղաք շատ կա, տուն չկա*
*Ծովեր, լճեր ջուր չունեն,*
*Անտառներում ծառ չկա:*
*Լեռներն առանց ստվեր են,*
*Գազանները բույն չունեն: (հանելուկ)*

Ա) մոլորակը
Բ) երկինքը
Գ) քարտեզը
Դ) երկիրը

10) Տարբերակներում բերված արտահայտություններից չորսը ենթարկվում են մի հետաքրքիր օրինաչափության: Ո՞ր տարբերակի արտահայտությունը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

Ա) քար լռություն
Բ) ոսկի ձեռքեր
Գ) անձրևի տարափ
Դ) արծաթ մազեր

Վերարտադրումը միայն "Օնլթեսոս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

*4 միավոր գնահատվող առաջադրանքներ*

11) Տարբերակներից ո՞րն է կապակցում *Էժան* և *կանթ* բառերը՝ լինելով մեկի հականիշը, մյուսի՝ գրաշրջումը (այսինքն՝ կազմված է նրա բոլոր տառերով):

Ա) թանկ
Բ) կարթ
Գ) ական
Դ) ժանգ

12) Տարբերակներից ո՞րը չկարողացավ թաքնվել *թութակ* բառում:

Ա) պտուղ
Բ) փայտե մուրճ
Գ) թվանշան
Դ) ծունկ

13) Ի՞նչ է գաղտնագրվել տառաշարքում:

*գիմինիտյունեչյունինիքե*

Ա) գիտունիկ
Բ) գանձարան
Գ) գիտելիք
Դ) գիտություն

14) Ո՞ր տարբերակի բառազույգի բառերն են իրարից տարբերվում հնչյունական կազմով:
Ա) Նարեկ - Կարեն
Բ) հարս - սրահ
Գ) առած - ծառա
Դ) աշակերտ - շատակեր

Վերահրատարակումը միայն Լոնդոնեասոս Լտդ-ի թույլտվությամբ

15) Կռահիր օրինաչափությունը և կիմանաս, թե ինչ բառ է թաքցրել մեղվիկը.

*կամար — արդուկ*

*անմարդաբնակ — ականանետ*

*մուծել — ելուստ*

*հարավ —*

Ա) վարար
Բ) ահավոր
Գ) վարել
Դ) ավարտ

16) Միերը «բառքամոցի» էր խաղում: Նա բառեր էր կազմել <u>*վարպետ*</u> բառի տառերով: Ո՞ր բառն է սխալ գրել Միերը:

Ա) սար
Բ) պար
Գ) տեր
Դ) վատ

Վերահրապարակումը միայն "Քոմփասոս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

17) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:




Ա) հիմք
Բ) հումք
Գ) հանք
Դ) քանի

18) Հեքիաթային հերոսներից որի՞ անունն է «տարբերվում» մյուսներից:

Ա) Անբան Հուռի
Բ) Կարմիր Գլխարկ
Գ) Բժիշկ Այբոլիտ
Դ) Ձախորդ Փանոս

19) Թվերը պահմտոցի են խաղում և թաքնվել են պատասխանի տարբերակներում: Տարբերակների բառերից որի՞ մեջ թիվ չկա:

Ա) ներկում
Բ) թթվեց
Գ) խանութպան
Դ) արտասահման

20) Մի գյուղացի Ձովունի գյուղից ոտքով գալիս էր Երևան: Ճանապարհին նրան դեմ հանդիման ելան երկու համագյուղացի, որոնցից յուրաքանչյուրն ուներ երկու շուն: Քանի՞ շունչ էր գնում Երևան:

Ա)5
Բ) 3
Գ) 1
Դ) 4

Վերարտադրումը միայն "Քոնդալոս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

## *5 միավոր գնահատվող առաջադրանքներ*

21) Ո՞ր տարբերակի ընկեր բառերն են մի հետաքրքիր օրինաչափությամբ «թաքնվել» բառաշարքում.

*անամպ, փասիան, սպա, եղնիկ*

Ա) ման և ափսե
Բ) կուլա և փարչ
Գ) ափսե և պնակ
Դ) արփի և արեգ

22) Գաղտնի տեղեկություններ հաղորդելու համար մեր նախնիները ստեղծել են «կոտորակագիր» կոչվող ծածկագիրը, որում հայոց այբուբենի յուրաքանչյուր տառ ներկայացվում է որպես կետերից ու մի գծիկից բաղկացած պատկեր: Այդ տառերից երեքը երևում են նկար 1-ում: Կռահիր, թե ինչ օրինաչափությամբ են կետերը կապված տառերի հետ, և որոշիր, թե ինչ բառ է ծածկագրված նկար 2-ում:

Նկար 1




Նկար 2



Ա) բարև
Բ) հարց
Գ) փորձ
Դ) գործ

Վերակոտրվածքների դեպքում "Քոչարի ԱԿԲ"-ի թույլտվությամբ

23) *Գտան նապաստակին* բառակապակցության մեջ երկու բառերի կցման տեղում թաքնվել է *Աննա* անունը: Պատասխանների չորս տարբերակներում նույնպես թաքնվել են անուններ, իսկ մեկում՝ մրգի անուն: Ո՞րն է այդ տարբերակը:

Ա) երկար սենյակ
Բ) անծայրածիր անապատ
Գ) հյութալի անանաս
Դ) օգտակար ամրակ

24) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա) դասարան
Բ) տառագիր
Գ) դասագիրք
Դ) տարեգիր

25) Տարբերակների բոլոր բառերն ունեն մի հետաքրքիր օրինաչափություն՝ բացի մեկից: Ո՞րն է այդ բառը:

Ա) հարս
Բ) մարզ
Գ) առած
Դ) դրամ

Վերարտադրումը միայն "Քոչ ճասոս ԼԱԲ"-ի թույլտվությամբ

26) Մեղվիկը թաքցրել է պատասխանը: Գտի՛ր այն:

սատնիոեենուղաբորան - ատնիոնուաբոր =

Ա) սեղան
Բ) սունկ
Գ) բնիկ
Դ) սեղմակ

27) Այսօր փետրվարի 11-ն է: Ո՞ր ամիսը կլինի ուղիղ 100 օր հետո:

Ա) ապրիլ
Բ) մայիս
Գ) հունիս
Դ) հուլիս

28) Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:

Ա) ուշադիր
Բ) ուշանալ
Գ) անուշիկ
Դ) անուշադիր

Վերակոչակոչ մրցույթ միայն "ՔոնթեսոնաԼաբ"-ի թույլտվությամբ